



Զահրատ

Պատմութեան դաս մը

Զահրատ Ա . իշխան մեծագոր
Արքայ հիմնադիր գահրատեան տոհմին
Որ սուրով թուրով գահը բարձրացաւ
Չնայած որբին այրիին լացին
Ու Զահրատ Բ . յաջորդն արժանի
Իր հոր անոր պէս քաջ արիւնարբու
Տարածեց անունն իր վեհ Նշանին
Երկիրներ անգին գերեց անթիւ ազգ

Գունդ գունդ կոյս աղջիկ բերաւ իրեն հետ
Մէկ մէկ անոնց հետ պատկեցաւ որդին
Զահրատ Գ . Մեծ կոչուած իրաւամբ
Մեծ որովհետեւ երկու տարուան մէջ
Բովանդակ երկիրն էգերուն բաշխեց
Այնպէս որ գերդ գահ Զահրատ Գ-ին
Ոգորէ շիուած աթոռ մը մնաց
Չեմ գիտեր քանի Զահրատ այն օրէն
Այդ գահին վրայ նստան ու գացին
Իսկ ես այդ տոհմէն Զահրատը վերջին
Ոչ թագը տեսած ոչ գահն իմ պապին
Եկեր եմ կ'երթամ այսպէս որու ինչ